

**Ազգային Պետություն կուսակցության
կանոնադրություն**
(քննարկման համար)

Յունիս, 2018 թվական
Յեղիմակ՝ Ավետիք Չալաբյան

1. Կանոնադրության սահմանումը

- 1.1. Սույն կանոնադրությունը ներառում է Ազգային Պետություն կուսակցության (այսուհետ՝ ԱՊԿ) կառավարման մարմինների՝ Չամազումարի, Խորհրդի, Գործադիր մարմնի, Տարածքային մարմինների, և Նախագահի լիազորությունները հիմնական քաղաքական որոշումների ընդունման, իրականացվող ծրագրերի նախաձեռնման, ներկայացման, գնահատման և հաստատման գործունեության ֆինանսավորման վերաբերյալ, ինչպես նաև ԱՊԿ անդամակցության կարգը
- 1.2. Սույն կանոնադրության անվանումն է Ազգային Պետություն կուսակցության կանոնադրություն, կրճատ անվանումը՝ «Կանոնադրություն»
- 1.3. Սույն Կանոնադրության սկզբունքները նպատակաուղղված են բարձրացնելու ԱՊԿ քաղաքական գործընթացների թափանցիկությունը և արդյունավետությունը՝ նվազագույն վարչարարության պայմաններում, և համապատասխանում են ՀՀ Սահմանադրության և ՀՀ «Կուսակցությունների մասին» Օրենքի պահանջներին

2. Կանոնադրության ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- 2.1. Սույն Կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ԱՊԿ Հիմնադիր համագումարի կողմից այն հաստատելու օրը
- 2.2. Սույն Կանոնադրությունը ուժը կորցրած է ճանաչվում ԱՊԿ Չամազումարի կողմից այն չեղարկելու օրվանից սկսած
- 2.3. Սույն Կանոնադրության փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում ԱՊԿ Չամազումարի կողմից դրանք հաստատելու օրը
- 2.4. Սույն Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները ենթադրում են համապատասխան փոփոխություններ ԱՊԿ գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերում

3. Հասկացություններ

Սույն Կանոնադրության մեր օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

ԱՊԿ	Ազգային Պետություն կուսակցություն
Համագումար	ԱՊԿ Կառավարման բարձրագույն մարմին
Հիմնադիրներ	ԱՊԿ Հիմնադիր ֆիզիկական անձիք
Խորհուրդ	ԱՊԿ ռազմավարական կառավարման հիմնական մարմին,
Գործադիր մարմին	ԱՊԿ ընթացիկ կառավարման հիմնական մարմին
Խորհրդի նախագահ	ԱՊԿ ընթացիկ կառավարման գլխավոր համակարգող
Քաղաքական ծրագիր	ԱՊԿ գործունեության հիմնական փաստաթուղթ
Արժեքային կողերս	ԱՊԿ արժեհամակարգը նկարագրող հիմնական փաստաթուղթ
Քարտուղարություն	ԱՊԿ վարչական աշխատանքները իրականացնող մարմին
Ծրագրի խումբ	ԱՊԿ ծրագրերի համակարգման համար ստեղծված խումբ
Տարածքային կառույց	ԱՊԿ մարզային գործունեությունը համակարգող մարմին
Ծրագրային բյուջե	ԱՊԿ կողմից իրականացվող առանձին ծրագրի բյուջե
Վարչական բյուջե	ԱՊԿ ընդհանուր գործառնությունների իրականացման և առաջնությունների իրականացման վրա անիջականորեն չբաժանված չունեցող դրամական և այլ նյութական միջոցներ

4. ԱՊԿ Համագումարը

- 4.1. Համագումարը ԱՊԿ կառավարման բարձրագույն մարմինն է
- 4.2. ԱՊԿ ընթացիկ Համագումարը գումարվում է 3 տարին մեկ անգամ
- 4.3. Համագումարի պատվիրակները ընտրվում են ԱՊԿ անդամների կողմից՝ ԱՊԿ 5 անդամից 1 պատվիրակ համամասնությամբ: Պատվիրակների ընտրությունը համակարգում են ԱՊԿ մարզային կառույցները՝ ԱՊԿ Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան: ԱՊԿ գործող Խորհրդի բոլոր անդամները ի պաշտոնե ևս Համագումարի պատվիրակներ են:
- 4.4. Համագումարը լսում և պատվիրակների ձայների մեծամասնությամբ հաստատում է ԱՊԿ Խորհրդի 3-ամյա քաղաքական հաշվետվությունը

- 4.5. Համագումարը հաստատում է ԱՊԿ քաղաքական ծրագիրը՝ պատվիրակների ձայների 2/3 մեծամասնությամբ
- 4.6. Համագումարը ընդունում է փոփոխություններ ԱՊԿ Կանոնադրության մեջ՝ պատվիրակների ձայների 2/3 մեծամասնությամբ
- 4.7. Համագումարը պատվիրակների ձայների մեծամասնությամբ հաստատում է ԱՊԿ Խորհրդի թվակազմը՝ հաջորդ 3 տարվա գործունեության համար
- 4.8. Համագումարը ընտրում է ԱՊԿ Խորհրդի անվանական կազմը՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր պատվիրակի կողմից 5 ձայն Համագումարի այլ պատվիրակներին բաշխելու միջոցով:
- 4.9. Համագումարը ընտրված Խորհրդի անդամների կազմից ընտրում է ԱՊԿ Խորհրդի նախագահին՝ պատվիրակների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի թեկնածուներ իրավասու են առաջադրել Խորհրդի անդամների ցանկացած 1/5-ը, կամ Համագումարի պատվիրակների ցանկացած 1/10-ը: Խորհրդի նախագահի ընտրությունը իրականացվում է գաղտնի քվեարկությամբ, և առնվազն երկու թեկնածուների առկայության դեպքում:
- 4.10. Անհրաժեշտության դեպքում, ԱՊԿ Խորհուրդը իրավասու է հրավիրել ԱՊԿ արտահերթ համագումար՝ Խորհրդի անդամների ձայների 2/3-ով: Այդ դեպքում, տարածքային կառույցներին հրավերն ուղարկվում է համագումարից առնվազն երկու շաբաթ առաջ:
- 4.11. ԱՊԿ Հիմնադիր համագումարը հրավիրվում է ԱՊԿ հիմնադիրների կողմից՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն: Հիմնադիր համագումարի բացառիկ իրավասության մեջ է գտնվում ԱՊԿ կազմավորումը և ԱՊԿ Կանոնադրության ընդունումը:

5. ԱՊԿ Խորհուրդը

- 5.1. Խորհուրդը ԱՊԿ կառավարման ռազմավարական մարմինն է
- 5.2. Խորհրդի կազմը ընտրվում է ԱՊԿ Համագումարի կողմից՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր պատվիրակի կողմից 5 ձայն Համագումարի այլ պատվիրակներին բաշխելու միջոցով: Խորհուրդի անդամ են ընտրվում առավելագույն թվով ձայներ հավաքած, Խորհուրդի հաստատված թվակազմի թվով պատվիրակները:
- 5.3. Խորհրդի անդամ կարող են ընտրվել ԱՊԿ այն անդամները, որոնք ունենք առնվազն մեկ տարվա ԱՊԿ անդամություն (բացառությամբ հիմնադիր համագումարի), և պատրաստ են լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ ստանձնել՝ տարեկան անդամավճարի քառապատիկի չափով:
- 5.4. ԱՊԿ Հիմնադիրները ԱՊԿ գործունեության առաջին 10 տարիների ընթացքում ավտոմատ կարգով հանդիսանում են ԱՊԿ Խորհրդի անդամ,

- բացառությամբ այն դեպքի, երբ կամավոր վայր են դնում այդ պարտականությունները, կամ էլ դուրս են գալիս ԱՊԿ անդամությունից:
- 5.5. Եթե Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում Խորհրդի անդամը կամավոր վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, Խորհրդի անդամին Խորհրդում փոխարինում է ռեյտինգային ցուցակում գտնվող հաջորդ պատվիրակը:
- 5.6. Խորհրդի պարտադիր նիստերը կայանում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ, եթե այլ ժամանակացույց չի հաստատվում, և ևս մեկ ամփոփիչ նիստ կայանում է յուրաքանչյուր տարեվերջին
- 5.7. Խորհուրդը հաստատում է Գործադիր մարմնի թվակազմը հաջորդ 3 տարիների գործունեության համար: Հատուկ դեպքերում, Խորհուրդը իրավասու է վերանայել Գործադիր մարմնի թվակազմը:
- 5.8. Խորհուրդը իր կազմից ընտրում է Գործադիր մարմին՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր անդամի կողմից 3 ձայն Խորհրդի այլ անդամներին բաշխելու միջոցով
- 5.9. Խորհրդի նիստերի օրակարգը հաստատվում է Գործադիր մարմնի կողմից:
- 5.10. Խորհուրդը քննարկում և հաստատում է ԱՊԿ քաղաքական ռազմավարությունը, քաղաքական և հարակից ծրագրերը, դրանց նպատակները և հիմնական չափորոշիչները, համապետական ծրագրերի բյուջեները և ֆինանսավորման միջոցները, ինչպես նաև քննարկում և ընդունում է ծրագրերի կատարողականը՝ ըստ հիմնական նպատակային չափորոշիչների և ծրագրերի բյուջեների
- 5.11. Խորհուրդը քննարկում և հաստատում է ԱՊԿ տարեկան վարչական բյուջեն
- 5.12. Խորհուրդը իր որոշմամբ ընդունում է ԱՊԿ նոր անդամներին Գործադիր մարմնի ներկայացման հիման վրա, և հատուկ դեպքերում ընդունում է որոշում՝ ԱՊԿ անդամներին ԱՊԿ կազմից հեռացնելու մասին, ևս Գործադիր մարմնի ներկայացման հիման վրա:
- 5.13. Ձայնի իրավունք ունենալու համար Խորհրդի անդամները պետք է ֆիզիկապես ներկա լինեն նիստին
- 5.14. Խորհուրդը իրավասու է կայացնել որոշումներ Խորհրդի անդամների և Գործադիր մարմնի անդամների 2/3-ի ներկայության դեպքում
- 5.15. Որոշման ընդունման համար անհրաժեշտ է Խորհրդի ներկա անդամների ձայների 2/3-ը:

5.16. Գործադիր մարմնի անդամների 2/3-ի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ, կարող է հրավիրվել Խորհրդի արտահերթ նիստ: Այդ դեպքում, Խորհրդի անդամներին հրավերն ուղարկվում է նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ:

6. ԱՊԿ Գործադիր մարմինը

6.1. Գործադիր մարմինը իրականացնում է ԱՊԿ ընթացիկ կառավարումը հաստատված քաղաքական ծրագրի և բյուջեի շրջանակներում, և իրավասու է ընդունել ԱՊԿ ընթացիկ կառավարման և իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ ցանկացած որոշում:

6.2. Գործադիր մարմին կազմը ընտրվում է ԱՊԿ Խորհրդի կողմից՝ ռեյտինգային քվեարկության միջոցով, յուրաքանչյուր անդամի կողմից 3 ձայն բաշխելու միջոցով: Գործադիր մարմնի անդամ են ընտրվում առավելագույն թվով ձայներ հավաքած, Գործադիր մարմնի հաստատված թվակազմի թվով Խորհրդի անդամները:

6.3. Եթե Գործադիր մարմնի անդամը կամավոր վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, Խորհուրդը իր հաջորդ նիստին ընտրում է Գործադիր մարմնի նոր անդամ՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ:

6.4. Գործադիր մարմնում աշխատանքը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Գործադիր մարմնի անդամը իր վրա պարտականություն է վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ աշխատանքը պայմանավորված է ԱՊԿ Խորհրդի կողմից հաստատված քաղաքական, պետական կամ հասարակական բնույթի գործառնությունների իրականացմամբ, ինչպես նաև գիտահետազոտական և դասախոսական գործունեությամբ:

6.5. Գործադիր մարմինը իր նիստերն անցկացնում է առնվազն ամիսը երկու անգամ՝ անդամների կողմից նիստին ֆիզիկապես ներկա գտնվելու, կամ բացառիկ դեպքերում, տեսազանգի միջոցով: Գործադիր մարմնի նիստը իրավասու է, եթե ներկա է անդամների առնվազն 2/3-ը, և ԱՊԿ Խորհրդի նախագահը:

6.6. Գործադիր մարմինը որոշում է կայացնում անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Անհամաձայնության դեպքում, ԱՊԿ Խորհրդի նախագահը իրավունք ունի կասեցնել Գործադիր մարմնի որոշումը: Այդ

դեպքում Գործադիր մարմինը իրավունք ունի ձայների 2/3-ով հաղթահարել ԱՊԿ Խորհրդի նախագահի կասեցումը:

- 6.7. Գործադիր մարմինը կարող է առանց Խորհրդի հաստատման ընդունել ցանկացած որոշումներ, որոնք չեն գտնվում ԱՊԿ Համագումարի և Խորհրդի բացառիկ իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև ըստ Էության չեն հակասում Խորհրդի նախկինում ընդունած որոշումներին: Գործադիր մարմինը իր ընդունված բոլոր որոշումների վերաբերյալ պարտավոր է եռամսյա հաշվետվություն ներկայացնել Խորհրդին:
- 6.8. Գործադիր մարմինը, ընթացիկ անհրաժեշտությունից ելնելով, իրավասու է վերանայել իրականացվող ծրագրերը և դրանց հատկացվող միջոցները, եթե սակայն դա բացահայտ չի հակասում Խորհրդի նախկինում ընդունված որոշումներին, և չի գերազանցում նախկինում ընդունված ծրագրային բյուջեն 20%-ով: Նման դեպքերում, Գործադիր մարմինը պարտավոր է որոշման ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում տեղեկացնել դրա մասին Խորհրդի բոլոր անդամներին: Հետագայում, ծրագրերի և դրանց հատկացվող բյուջեի փոփոխությունները պետք է պարտադիր ներկայացվեն Խորհրդի առաջիկա նիստի հաստատմանը:
- 6.9. Գործադիր մարմինը իրավասու է իր անդամների միջև բաշխել պատասխանատվություն՝ ըստ Քաղաքական ծրագրի հիմնական ուղղությունների, և կամ գործունեության այլ խելամիտ տարաբաժանման:
- 6.10. Գործադիր մարմնի անդամների 1/3-ի կամ ԱՊԿ Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, կարող է հրավիրվել Գործադիր մարմնի արտահերթ նիստ: Այդ դեպքում, Գործադիր մարմնի անդամներին հրավերն ուղարկվում է նիստից առնվազն մեկ օր առաջ:

7. ԱՊԿ Խորհրդի նախագահը

- 7.1. ԱՊԿ Խորհրդի նախագահը իրականացնում է ԱՊԿ ընթացիկ գործունեության ընդհանուր համակարգումը
- 7.2. Խորհրդի նախագահը ընտրվում է Համագումարի կողմից, ձայների բացարձակ մեծամասնությամբ, Խորհրդի գործունեության ամբողջ ժամկետով
- 7.3. Եթե Խորհրդի նախագահը կամավոր վայր է դնում իր պարտականությունները, կամ հնարավորություն չունի դրանք իրականացնել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով,

Խորհուրդը իր հաջորդ նիստին ընտրում է նոր Խորհրդի նախագահ՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ, և մինչև իր գործունեության ժամկետի ավարտը: Մինչ այդ, Խորհրդի նախագահի լիազորությունները ժամանակավոր իրականացնում է Գործադիր մարմնի առավելագույն ռեյտինգ ունեցող անդամը:

- 7.4. Խորհրդի նախագահի գործունեությունը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Խորհրդի նախագահը իր վրա պարտականություն է վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ աշխատանքը պայմանավորված է ԱՊԿ Խորհրդի կողմից հաստատված քաղաքական բնույթի գործառնությունների իրականացմամբ: Խորհրդի նախագահը նաև չի կարող ընդգրկվել մասնավոր ընկերությունների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների կառավարման մարմիններում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան որոշում է ընդունում ԱՊԿ Խորհուրդը:
- 7.5. Խորհրդի նախագահը հրավիրում է Գործադիր մարմնի և Խորհրդի ընթացիկ և արտահերթ նիստերը, և ձևավորում է դրանց օրակարգը: Խորհրդի նախագահը իրավասու է վարել Գործադիր մարմնի և Խորհրդի նիստերը, և կամ պատվիրակել իր հայեցողությամբ այդ իրավասությունը Գործադիր մարմնի այլ անդամի:
- 7.6. Խորհրդի նախագահը իրավասու է հանդես գալ ԱՊԿ Գործադիր մարմնի և Խորհրդի անունից քաղաքական հայտարարություններով՝ համապատասխան որոշումների շրջանակներում:
- 7.7. Խորհրդի նախագահը պատասխանատու է ԱՊԿ Քարտուղարության գործունեության վերահսկման համար:
- 7.8. Խորհրդի նախագահը տնօրինում է ԱՊԿ Վարչական բյուջեն, և պատասխանատու է միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար:

8. ԱՊԿ Անդամությունը

- 8.1. ԱՊԿ անդամ կարող են դառնալ ՉՉ բոլոր այն չափահաս (18 տարին լրացած) քաղաքացիները, որոնք կիսում են ԱՊԿ Քաղաքական ծրագիրը և Կանոնադրությունը, պատրաստ են գործել ԱՊԿ Արժեքային Կոդեքսի սկզբունքներին համաձայն, ունեն ինքնուրույն եկամուտի աղբյուր, և չունեն դատվածություն ծանր և առավել ծանր հանցագործությունների համար: ԱՊԿ անդամ չեն կարող դառնալ նաև ՉՉ այն քաղաքացիները, որոնց ՉՉ

կուսակցությունների մասին օրենքով արգելվում է լինել որևէ քաղաքական կուսակցության անդամ:

- 8.2. ԱՊԿ անդամության համար քաղաքացին դիմում է ներկայացնում ըստ բնակության վայրի Տարածքային կառույցին, կամ դրա բացակայության դեպքում՝ ԱՊԿ Խորհրդին: Դիմումի ձևը հաստատվում է ԱՊԿ Խորհրդի կողմից:
- 8.3. Տարածքային կառույցը իրավասու է քննել դիմումը, և այն ներկայացնել ԱՊԿ Խորհրդին, կամ մերժել այն՝ համապատասխան հիմնավորումներ տրամադրելով դիմող քաղաքացուն: Եթե դիմումը ներկայացված է Խորհրդին, այն նախապես քննում է Գործադիր մարմինը, և տրամադրում է Խորհրդին գրավոր կարծիք:
- 8.4. ԱՊԿ Խորհուրդը, իր յուրաքանչյուր հերթական նիստին, քննում է Տարածքային կառույցների միջոցով կամ ուղղակիորեն ստացված անդամակցության դիմումները, քննում է դրանց վերաբերյալ Գործադիր մարմնի կարծիքը, և կամ հաստատում է դրանք, կամ մերժում՝ համապատասխան հիմնավորումներ տրամադրելով դիմող քաղաքացուն: ԱՊԿ Խորհուրդը նաև կարող է հաստատել քաղաքացուն ԱՊԿ անդամության թեկնածուի կարգավիճակում՝ տալով որոշակի փորձաշրջան, որի ավարտին նորից քննվում է դիմումը:
- 8.5. ԱՊԿ Խորհրդի հաստատման պահից, քաղաքացին համարվում է ԱՊԿ անդամ, և նրա վրա են տարածվում ԱՊԿ անդամի իրավունքները և պարտավորությունները:
- 8.6. ԱՊԿ անդամը իրավունք ունի ընտրել և ընտրվել ԱՊԿ կառավարման մարմիններում, և ընտրվելու դեպքում՝ մասնակցել դրանց աշխատանքին՝ ընդհանուր հիմունքներով: ԱՊԿ անդամը նաև իրավունք ունի անդամակցել Ծրագրային խմբերի աշխատանքին՝ համապատասխան խմբի ղեկավարի կողմից հրավեր ստանալու դեպքում: ԱՊԿ անդամը սակայն իրավունք չունի ԱՊԿ անունից գործել կամ հանդես գալ, եթե նա լիազորված չի ԱՊԿ համապատասխան կառավարման մարմնի կողմից:
- 8.7. ԱՊԿ անդամը պարտավոր է իր գործունեության մեջ ենթարկվել սույն Կանոնադրությանը և ԱՊԿ Կառավարման մարմինների որոշումներին, գործել ԱՊԿ Արժեքային Կոդեքսի համապատասխան, կանոնավոր մասնակցել ԱՊԿ Կառավարման մարմինների ընտրություններին, և ընտրվելու դեպքում՝ դրանց աշխատանքին, և վճարել ԱՊԿ Խորհրդի կողմից սահմանվող անդամաճար:
- 8.8. Եթե ԱՊԿ անդամը պարբերաբար խախտում է 8.7. Կետի պահանջները, նա կարող է հեռացվել ԱՊԿ կազմից՝ ԱՊԿ Խորհրդի որոշմամբ: Այդ դեպքում, ԱՊԿ Խորհրդի կողմից հեռացվող անդամին տրամադրվում է

համապատասխան հիմնավորում, և մեկ անգամ հեռացումը վիճարկելու հնարավորություն:

8.9. ԱՊԿ անդամը, ԱՊԿ հորհրդին ներկայացված իր դիմումին համաձայն, կարող է դուրս գալ ԱՊԿ անդամությունից: Այդ դեպքում, նա պարտավոր է կատարել տվյալ տարվա ֆինանսական պարտավորությունները, և ԱՊԿ համապատասխան տարածքային կառույցին հանձնել իր տնօրինության մեջ գտնվող ԱՊԿ գույքը և փաստաթղթերը, ներառյալ էլեկտրոնային: ԱՊԿ անդամը նաև պարտավոր է իր անդամակցությունը դադարեցնելուց հետո հինգ տարի ընկած ժամանակամիջոցում ձեռնպահ մնալ ԱՊԿ շրջանակներում իր գործունեության արդյունքում ստացած որևէ կոնֆիդենցիալ տեղեկատվության հրապարակումից:

9. ԱՊԿ Քարտուղարությունը

9.1. ԱՊԿ Քարտուղարությունը պատասխանատու է բոլոր վարչական գործառնությունների համար և իրականացնում է ԱՊԿ ծրագրերի իրականացման գործառնական ապահովումը:

9.2. Քարտուղարության կառուցվածքը ձևավորվում է ԱԱՅ Նախագահի կողմից, և հաստատվում է Գործադիր մարմնի կողմից:

9.3. Գործադիր մարմինը ընտրում է Գործադիր քարտուղար, որը մշտական աշխատանքի հիման վրա, իրականացնում է Քարտուղարության գործունեության ընթացիկ ղեկավարությունը:

9.4. Քարտուղարության ղեկավար աշխատակիցները նշանակվում են հորհրդի նախագահի կողմից Գործադիր քարտուղարի ներկայացմամբ, և իրենց ընթացիկ գործունեությամբ հաշվետու են Գործադիր քարտուղարին:

9.5. Քարտուղարությունը պատասխանատու է տարեկան վարչական բյուջեի կազմման համար, և հետագայում հաշվետու է հաստատված բյուջեի կատարման համար:

9.6. Քարտուղարությունը պատասխանատու է հորհրդի և Գործադիր մարմնի կողմից հաստատված ծրագրերի տեխնիկական առաջադրանքի, իրականացման ճանապարհային քարտեզի, և բյուջեի կազմման համար:

9.7. Քարտուղարությունը պատասխանատու է հորհրդից և արտաքին աղբյուրներից ԱՊԿ ծրագրերի իրականացման համար հանգանակությունների փաստացի հավաքագրման, վարչական ու ծրագրային ծախսերի միջև բաշխման, և ծախսերի արդյունավետության ապահովման համար՝ համապատասխան հատատված վարչական և ծրագրային բյուջեների:

9.8. Քարտուղարության շրջանակներում կարող են ձևավորվել ժամանակավոր ծրագրային խմբեր՝ օժանդակելու ԱՊԿ տարբեր մարմինների կողմից իրականացվող ծրագրերի աշխատանքին:

- 9.9. Քարտուղարության ղեկավար աշխատակիցների գործունեության գնահատականը և վարձատրության պայմանները Նախագահի ներկայացմամբ սահմանվում են Գործադիր մարմնի կողմից՝ հաստատված տարեկան ընդհանուր բյուջեի շրջանակներում:
- 9.10. Քարտուղարությունում աշխատանքը կրում է հիմնական բնույթ և վարձատրվում է: Քարտուղարության ղեկավար աշխատակիցները իրենց վրա պարտականություն են վերցնում այլ վարձատրվող աշխատանքով չզբաղվել, բացառությամբ գիտահետազոտական և կրթական գործունեության:

10. Տարածքային կառույց

- 10.1. Տարածքային կառույցը ԱՊԿ գործունեությունը Երևան քաղաքի վարչական շրջաններում և ՀՀ մարզերում (Տարածք) տեղական մակարդակով ԱՊԿ գործունեությունը համակարգող հիմնական մարմինն է:
- 10.2. Տարածքային կառույցը ձևավորվում է, եթե տվյալ տարածքում բնակվող ԱՊԿ անդամների թիվը գերազանցում է 50-ը: Մինչ այդ, Տարածքային կառույցը կարող է ստեղծվել և ժամանակավոր գործել՝ միավորելով մեկից ավել Տարածքներում բնակվող ԱՊԿ անդամների:
- 10.3. Տարածքային կառույցը ձևավորվում է տվյալ Տարածքում գործող ԱՊԿ բոլոր անդամների կողմից, 5 անդամին 1 ներկայացուցիչ հարաբերակցությամբ: Տարածքային կառույցի ընտրությունը տեղի է ունենում տվյալ Տարածքում բնակվող ԱՊԿ անդամների ընդհանուր ժողովի միջոցով, որը իրավասու է անդամների առնվազն 2/3-ի առկայության դեպքում: Տարածքային կառույցը ընտրվում է 3 տարի ժամկետով:
- 10.4. Տարածքային կառույցը իր անդամների թվից ձայների մեծամասնությամբ ընտրում է Տարածքի Համակարգող: Եթե Տարածքային կառույցի անդամների թիվը գերազանցում է 20-ը, Տարածքային կառույցը իրավասու է նաև իր կազմից ընտրել մշտական սկզբունքներով գործող վարչություն:
- 10.5. Տարածքային կառույցը քննարկում և հաստատում է տվյալ Տարածքում իրականացվող տեղական նշանակության ծրագրերը, դրանց նպատակները և հիմնական չափորոշիչները, ծրագրերի բյուջեները և ֆինանսավորման միջոցները, ինչպես նաև քննարկում և ընդունում է ծրագրերի կատարողականը՝ ըստ հիմնական նպատակային չափորոշիչների և ծրագրերի բյուջեների: Տարածքային կառույցը պատասխանատվություն է կրում տեղական ծրագրերի դրամահայթաթման և բյուջեի արդյունավետ օգտագործման համար: Տարածքային կառույցի որոշումները կարող են չեղարկվել ԱՊԿ խորհրդի կողմից, եթե տեղական ծրագրի իրականացումը հակասության մեջ է մտնում համապետական ծրագրերի հետ: Այդ դեպքում, ԱԱԽ խորհուրդը պարտավոր է

համապատասխան բացատրություն տրամադրել խնդրո առարկա Տարածքային կառույցին, ինչպես նաև տրամադրել մեկ անգամ հորհրդի որոշումը վիճարկելու իրավունք:

- 10.6. Համապետական ծրագրերի իրականացման շրջանակներում, Տարածքային կառույցը համակարգում է ծրագրերի իրականացումը տվյալ Տարածքում՝ ենթարկվելով ԱՊԿ հորհրդի որոշումներին
- 10.7. Տարածքային կառույցը ԱՊԿ հորհրդի հաստատմանն է ներկայացնում ԱՊԿ անդամների թեկնածությունները
- 10.8. Տարածքային կառույցը իր նիստերն անցկացնում է առնվազն ամիսը մեկ անգամ
- 10.9. Ձայնի իրավունք ունենալու համար Տարածքային կառույցի անդամները պետք է ֆիզիկապես ներկա լինեն նիստին
- 10.10. Տարածքային կառույցը իրավասու է կայացնել որոշումներ իր անդամների 2/3-ի ներկայության դեպքում
- 10.11. Որոշման ընդունման համար անհրաժեշտ է Տարածքային կառույցի ներկա անդամների ձայների 2/3-ը
- 10.12. Տարածքի Համակարգողի կամ Տարածքային կառույցի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ: Այդ դեպքում, Տարածքային կառույցի անդամներին հրավերն ուղարկվում է նիստից առնվազն մեկ օր առաջ:

11. Ծրագրային խումբ

- 11.1. Ծրագրային խումբը պատասխանատու է հաստատված առանձին քաղաքական ծրագրերի իրականացման համար
- 11.2. Ծրագրային խումբը ձևավորվում է կամավորության սկզբունքով և նրա վերջնական կազմը հաստատվում է հորհրդի որոշմամբ: Եթե ծրագիրը սկսել է Գործադիր մարմնի նախաձեռնությամբ, ապա Ծրագրային խմբի կազմը ևս հաստատվում է Գործադիր մարմնի կողմից
- 11.3. Ծրագրային խումբը ծրագրի արդյունքները ներկայացնում է հորհրդին, ինչպես նաև Գործադիր մարմնի պահանջով կարող է միջանկյալ արդյունքները ներկայացնել Գործադիր մարմնին
- 11.4. Ծրագրային խմբում կարող են լինել Գործադիր մարմնի անդամներ, հորհրդի անդամներ, Քարտուղարության աշխատակիցներ, Տարածքային կառույցների անդամներ, ԱՊԿ անդամներ, ինչպես նաև ներգրավված արտաքին փորձագետներ

- 11.5. Յուրաքանչյուր ճրագրային խմբի համար Գործադիր մարմինը հաստատում է ճրագրի ղեկավար խորհրդի կազմից, ով համակարգում է ճրագրային խումբը և պատասխանատու է ճրագրի արդյունքների համար:
- 11.6. Ճրագրի ղեկավարը իր ընթացիկ գործունեության մեջ հաշվետու է Գործադիր մարմնին: Գործադիր մարմինը կարող է որոշում կայացնել փոխել ճրագրի ղեկավարին՝ ճրագրի իրականացման բարելավման նպատակով
- 11.7. Ճրագրային խումբը Գործադիր մարմնի աջակցությամբ պատասխանատու է ճրագրի իրականացման համար ֆինանսավորման աղբյուրներ գտնելու համար
- 11.8. Ազգային անվտանգության հետ անմիջականորեն առնչվող, ինչպես նաև այլ ռազմավարական կարևորության ճրագրերը կարող են ղեկավարել միայն Գործադիր մարմնի անդամները, ովքեր անձամբ են որոշում ճրագրային խմբի կազմը և ներկայացնում են Գործադիր մարմնի հաստատմանը:

12. Բյուջետավորում

- 12.1. Ամեն տարվա Վարչական բյուջեն, ռեզերվը և շարունակական բնույթ կրող, կանխատեսելի տարեկան բյուջեով ճրագրերի բյուջեները հաստատվում են նախորդ տարվա վերջին ամսվա ընթացքում՝ ԱՊԿ խորհրդի կողմից
- 12.2. Մնացած ճրագրերի համար բյուջեները հաստատվում են ճրագրերի ընդունմանը զուգահեռ՝ ԱՊԿ խորհրդի կողմից, իսկ դրանց փոփոխության դեպքում՝ Գործադիր մարմնի կողմից:
- 12.3. Վարչական բյուջեն խորհրդի հաստատմանն է ներկայացնում ԱՊԿ Նախագահը՝ նախապես համաձայնեցնելով Գործադիր մարմնի հետ
- 12.4. Ճրագրային բյուջեները խորհրդի հաստատմանն են ներկայացնում համապատասխան ճրագրային խմբի ղեկավարը՝ համաձայնեցնելով Նախագահի և Գործադիր մարմնի հետ

13. Ֆինանսավորում

- 13.1. Ամեն տարվա սկզբում Գործադիր մարմինը հավաքագրում է ֆիքսված հանձնառությունները, որոնք նախատեսված են վարչական բյուջեի և ռեզերվի համար:
- 13.2. ԱՊԿ անդամների ամենամյա անդամավճարը սահմանվում է ԱՊԿ Խորհրդի կողմից՝ 3 տարին մեկ: ԱՊԿ Խորհրդի անդամները, անդամավճարից զատ, տրամադրում են ամենամյա նվիրատվություն անդամավճարի քառապատիկ չափով:
- 13.3. ԱՊԿ բոլոր անդամների կողմից անդամավճարները պետք է վճարվեն տարվա ընթացքում համաչափ՝ եռամսյա վճարումներով, ամենաուշը մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա վերջին աշխատանքային օրը:
- 13.4. Տարեկան անդամավճարը մինչև համապատասխան վերջնաժամկետը չվճարած Խորհրդի անդամը զրկվում է Խորհրդում անդամության իրավունքից՝ մինչև երեք տարի ժամկետով: Տարեկան անդամավճարը մինչև համապատասխան վերջնաժամկետը չվճարած ԱՊԿ անդամը զրկվում է ԱՊԿ Կառավարման մարմիններում ընտրվելու իրավունքից՝ մինչև երեք տարի ժամկետով:
- 13.5. Ընթացիկ տարում բյուջեում հավելուրդի առկայության դեպքում, գոյացած միջոցները տեղափոխվում են հաջորդ տարվա բյուջե
- 13.6. Ընթացիկ տարում բյուջեում պակասուրդի առկայության դեպքում Խորհուրդը որոշում է կայացնում պակասուրդը ծածկելու համար լրացուցիչ միջոցներ ներգրավելու մասին
- 13.7. Նոր ծրագրի քննարկման ժամանակ հաստատվում է անհրաժեշտ ֆինանսավորման չափը, և առաջարկ է արվում Խորհրդի անդամներին ֆինանսավորել ծրագիրը, և կամ մասնակցել դրամահայթայթման աշխատանքներին՝ ԱՊԿ անդամների և աջակիցների շրջանակներում:
- 13.8. Միայն բավարար ֆինանսավորման հանձնառության առկայության դեպքում ծրագիրը կարող է վերջնական հաստատվել, այլապես ծրագրի ծավալները կամ իրականացման ժամանակացույցը պետք է վերանայվեն Խորհրդի կողմից՝ ապահովելու ծրագրի մուտքերի և ելքերի միջև համապատասխանությունը
- 13.9. Խորհրդի այն անդամները, ովքեր ներառված են Ծրագրային խմբում, համատեղ պատասխանատվություն են կրում տվյալ ծրագրի ֆինանսավորման հայթայթման համար:

- 13.10. Արտաքին աղբյուրներից ֆինանսավորման ներգրավվածության դեպքում, հնարավոր նվիրատուի թեկնածությունը պետք է հաստատվի Գործադիր մարմնի կողմից, հնարավոր շահերի բախումից խուսափելու նպատակով:
- 13.11. Ծրագրերի համար կատարվող նվիրատվությունները հավաքագրվում են ԱՊԿ հաշվին կատարվող փոխանցումների միջոցով:

14. Լուծարում

- 14.1. Իր կանոնադրական գործառույթների իրականացման անհնարինության դեպքում, կամ մեկ այլ կուսակցության միավորվելու դեպքում, ԱՊԿ-ը կարող է լուծարվել: ԱՊԿ լուծարման բացառիկ իրավասություն ունի ԱՊԿ համագումարը:
- 14.2. ԱՊԿ լուծարման կամ այլ կուսակցության միավորվելու նախաձեռնությամբ ԱՊԿ արտահերթ համագումար կարող է հրավիրել ԱՊԿ Խորհուրդը՝ Խորհրդի անդամների բացարձակ թվի 2/3-ի ձայներով կայացված որոշմամբ, կամ ԱՊԿ անդամների առնվազն 2/3-ը ներկայացնող Տարածքային կառույցների նախաձեռնությամբ՝ այդ կառույցների կողմից կայացված որոշումների և Խորհրդին ներկայացված համապատասխան դիմումների հիման վրա:
- 14.3. ԱՊԿ լուծարումը կամ այլ կուսակցությանը միավորումը կարող է տեղի ունենալ միայն ԱՊԿ արտահերթ համագումարի պատվիրակների բացարձակ թվի ձայների 2/3-ով ընդունված որոշմամբ:
- 14.4. ԱՊԿ լուծարման դեպքում ԱՊԿ գույքը, ԱՊԿ գործող ֆինանսական պարտավորությունները կատարելուց հետո, բաշխվում է լուծարման պահին ԱՊԿ առկա անդամների միջև, յուրաքանչյուրի կողմից իր անդամության ընթացքում վճարված անդամավճարներին և այլ ֆինանսական ներդրումներին համամասնական չափով: